



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

№ 1918-Ա/2

«9» հոկտեմբերի 2024թ.

**2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 15-22-Ը ՍՈՉԻՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ
ԱՍՏՂԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՑ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ
ԵԶՐԱՓԱԿԻՉ ՓՈՒԼԻ ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐՆԵՐԻՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ
ԿՐԹԱԹՈՇԱԿ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով ՀՀ վարչապետի 2019թ. հունիսի 1-ի N 661-Լ որոշման հավելվածով հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 20-րդ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի մայիսի 12-ի N 52-Ն հրամանի հավելված 1-ի 2-րդ կետի 3-րդ ենթակետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

- 2024 թվականի սեպտեմբերի 15-22-ը Սոչի քաղաքում տեղի ունեցած աստղագիտության երրորդ միջազգային բաց օլիմպիադայի եզրափակիչ փուլի մրցանակակիրներին տրամադրել անվանական կրթաթոշակ՝ համաձայն հավելվածի:
- Նախարարության ֆինանսաբյուջետային վարչությանը /պետ՝ Ա. Թադևոսյան/ համապատասխան ուսումնական հաստատություններին տրամադրել ֆինանսական միջոցներ սահմանված կարգով՝ կրթաթոշակ տրամադրելու համար:
- Նախարարության հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչությանը /մամուլի քարտուղարի պարտականությունները կատարող՝ Կ. Մանուկյան/ սահմանված կարգով ապահովել հրամանի հրապարակումը նախարարության պաշտոնական կայքում:

4. Հրամանի կատարման ապահովումը հանձնարարել հանրակրթության վարչությանը /պետ՝ Թ. Սարգսյան/:
5. Հրամանի կատարման հսկողությունը վերապահել նախարարի տեղակալ Ա. Սվաջյանին:

ՆԱԽԱՐԱՐ՝

Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

X

ՑՈՒՑԱԿ

2024 թվականի սեպտեմբերի 15-22-ը Սոչի քաղաքում տեղի ունեցած աստղագիտության
երրորդ միջազգային բաց օլիմպիադայի կրթաթոշակ ստացողների

N	Ազգանուն	Անուն	Կրթօջախ	Դաս.	Առարկա	Մրցանակ
1.	Մուշեղյան	Էմիլ	«ԵՊՀ-ին առընթեր Ա.Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական հատուկ դպրոց» ՊՈԱԿ	12	Աստղագիտություն	ոսկի
2.	Հասրաթյան	Գոռ	«ԵՊՀ-ին առընթեր Ա.Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական հատուկ դպրոց» ՊՈԱԿ	12	Աստղագիտություն	ոսկի
3.	Գալստյան	Նարեկ	«ԵՊՀ-ին առընթեր Ա.Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական հատուկ դպրոց» ՊՈԱԿ	12	Աստղագիտություն	ոսկի